6429

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

Մ. Ջ. ԲԱԳԻՐՈՎ

# ՀԱՄԿՈՄԿՈՒՍ(բ) ԿԵՆՏԿՈՄԻ ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

3КП2
Б-13

ԱԴՐԿՈՒՍՀՐԱՏ
ԲԱԳՈՒ — 1936

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք!





3КП2
Б-13

15 SEP 2005
14 NOV 2009
26 FEB 2013

Մ. Ջ. ԲԱԳԻՐՈՎ

# ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ(Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զեկուցում Բագվի կուսակցական կազմակերպության ակտիվի ժողովում. 7 հունվարի 1936 թ.

200
~~3693~~

ԱԳՐԿՈՒՍՀՐԱՏ
ԲԱԳՈՒ — 1936

26 FEB 2013
6429
15 SEP 2005
Գ 696-53
3257-91

Ընկերներ, ձեզ հայտնի յէ, վոր մեր կուսակցության Կենտկոմի դեկտեմբերյան պլենումը քննության առավ յերկու հարց—արդյունաբերության և տրանսպորտի հարցերը՝ ստախանովյան շարժման կապակցությամբ և կուսակցական փաստաթղթերի ստուգման հանրագումարները:

Պլենումի բանաձևերը, այնտեղ յեղած գրեթե բոլոր զեկուցումները և մի շարք յելույթներ հրապարակված են:

Այսպիսով, դուք բոլորդ կարողացաք մանրամասնորեն ծանոթանալ մեր կուսակցության Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի աշխատանքի ու վորոշումների հետ, վորոնք ահագին պատմական նշանակություն ունեն սոցիալիզմի կառուցման գործում:

Ստախանովականների առաջին համամիութենական խորհրդակցությունում ընկեր Ստալինը տվեց քարածխային Դոնբասում սկսված ստախանովյան շարժման իմաստի և նշանակության փայլուն լենինյան անալիզը:

Ընկեր Ստալինն ասաց.

«Մի՞թե պարզ չէ, վոր ստախանովականները նորարներ են մեր արդյունաբերության մեջ, վոր ստախանովյան շարժումը ներկայացնում է մեր ինդուստրիայի ապագան, վոր նա իր մեջ պարունակում է բանվոր դասակարգի ապագա կուլտուր-տեխնիկական վերելքի հատիկը, վոր նա մեզ հա-

մար բաց ե անում այն ուղին, վորով և միայն կարելի յե հասնել աշխատանքի արտադրողականության այն բարձրագույն ցուցանիշներին, վորոնք անհրաժեշտ են սոցիալիզմից կոմունիզմին անցնելու և մտավոր աշխատանքի ու ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրությունը վոչնչացնելու համար»:

Հետևապես, ստախանովյան շարժումը նոր ետապ ե բաց անում սոցիալիզմի կառուցման մեջ, մի ետապ, վորը նախապատրաստում ե անցումը սոցիալիզմից դեպի կոմունիզմ:

Այս հարցի վերաբերյալ դեկտեմբերյան պլենումի վորոշումները մարտական ծրագիր են հանդիսանում մեր ամբողջ կուսակցության համար, մեր ամբողջ յերկրի համար:

Կուսակցական փաստաթղթերի իսկականության ստուգումը, վորն անցկացվեց ընկեր Ստալինի նախաձեռնությամբ, մաքրեց կուսակցության շարքերը խորթ, խցկված տարրերից, ամրապնդեց կուսակցության շարքերը: Այս հարցի առթիվ դեկտեմբերյան պլենումի վորոշումն ստալինյան ծրագիր ե հանդիսանում, վորն ապահովում ե մեր շարքերի հետագա ամրապնդումը, ներկուսակցական կյանքի աշխուժացումը, բոլշևիկյան կարգապահության բարձրացումը կուսակցության շարքերում, կուսակցության հեղափոխական զգոնության և լենինյան-ստալինյան մարտական պատրաստականության ուժեղացումը:

Սոցիալիզմի համար մղվող պայքարի կարևորագույն ետապներում մեր կուսակցությունը նախ և առաջ վերանայել ե իր շարքերը, ապահովելով նրանց ե՛լ ավելի համախմբվածությունը, նրանց մարտունակությունն ու բոլշևիկյան զգոնությունը, նրանց յերկաթե լենին-ստալինյան կարգապահությունը:

Ահա թե ինչու պատահական չե մեր կյանքի, մեր աշխատանքի այս յերկու կարևորագույն հարցերի միաժամանակ քննարկումը Կենտրոնական Կոմիտեյի դեկտեմբերյան պլենումում:

Ստախանովյան շարժումը մեր յերկրում սոցիալիզմի վիթխարի հաղթանակների արդյունքն ե:

Ստախանովականների խորհրդակցությունում իր պատմական ճառում ընկեր Ստալինն ասել ե, վոր ստախանովյան շարժումը հնարավոր ե դարձել շնորհիվ բանվորների նյութական դրության արմատական բարելավման, մեզ մոտ շահագործության բացակայության, մեզ մոտ նոր տեխնիկայի և այդ տեխնիկան յուրացրած կադրերի առկայության:

Յերկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղական տնտեսության կոլեկտիվացման իրագործման հետևանքով՝ սոցիալիզմը հաղթանակել ե ԽՍՀՄ-ում վերջնականապես և անդառնալիորեն:

Այս համաշխարհային պատմական հաղթանակը մեր կուսակցությունը նվաճել ե բանվոր դասակարգի բոլոր թշնամիների, կուլակության, շահագործող դասակարգերի գազազած մնացորդների և կուսակցության ներսում նրանց գործակալության դեմ, հակահեղափոխական տրոցկիստների և զինովևականների դեմ, աջ ուկլոնիստների և մյուս հակակուսակցական ու հակախորհրդային խմբակների դեմ մղած անողոք պայքարում:

Բանվոր դասակարգի հերոսական պայքարով՝ կուսակցության ղեկավարությամբ, ընկեր Ստալինի ղեկավարությամբ կարճ ժամանակում մեր յերկրում ստեղծված ե հզոր, գիտության ու տեխնիկայի վերջին խոսքի համաձայն սարքավորված ծանր արդյունաբերություն, վորն ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման բազան ե հանդիսանում:

10 տարվա ընթացքում՝ 1925 թվից մինչև 1935 թիվը մեր ծանր արդյունաբերության արտադրանքը մեծացել ե 10,3 անգամով, ըստ վորում ելեկտրոեներգիայի արտադրությունն այդ ժամանակաընթաց-

քում մեծացել է 17 անգամով: Զուգունի ձուլման դըծով 1925 թվին մենք բռնում եյինք 7-րդ տեղն աշխարհում, իսկ այժմ յերկրորդ տեղն ենք վիճարկում Գերմանիայից: Տրակտորների արտադրությամբ բռնում ենք այժմ առաջին տեղը և բեռնատար ավտոմոբիլների՝ յերկրորդ տեղն աշխարհում:

Մեր ամբողջ ժողովրդական տնտեսության առաջից գնացող ծանր արդյունաբերությունն ընկեր Սերգո Օրջոնիկիձեյի ղեկավարությամբ ժամկետից շուտ կատարեց 1935 թվի պլանը, ձեռք բերելով նոր չտեսնված հաղթանակներ:

Գերակատարեց իր պլանը սննդի արդյունաբերությունը, վորն ահագին չափով աճել և դարձել է հզոր սոցիալիստական ինդուստրիա:

1935 թվի պլանները գերակատարեցին նույնպես և մեր թեթև ու անտառային արդյունաբերությունը:

Վերջին տարիների ընթացքում, առաջին անգամ գերակատարեց իր պլանը յերկաթուղային տրանսպորտը, վորն ընկեր Կագանովիչի ղեկավարությամբ դեպի վեր է գնում:

Մեր մեծ հաղթանակն է հանդիսանում մարդկանց, սոցիալիստական տեխնիկայի ենտուզիաստների, կուսակցական և վոչ կուսակցական բոլշևիկների, անձնվիրաբար սոցիալիզմի գործին, Լենինի-Ստալինի գործին նվիրվածների դաստիարակված և աճեցված սերունդը:

Կենտկոմի պլենումը մատնանշեց, վոր

«Այս բոլոր փաստերը՝ կապիտալիստական վերջին դասակարգի՝ կուլակության և շահագործող դասակարգերի մնացորդների վերացման, խորհրդային յերկրում շահագործումը վոչնչացնելու և աշխատանքը պատվի, փառքի, արիության ու հերոսության գործ դարձնելու, բանվորների նյութական դրությունն արմատապես բարելավելու, նրանց քաղաքական գիտակցության ու ակտիվության աճման հետ միասին հանցրին մեր յերկրում ստախանովյան շարժման բուռն զարգացմանը»:

Հիմա ամբողջ կուսակցությունն ու յերկիրը, զինված ստախանովականների առաջին համամիութենական խորհրդակցությունում ընկեր Ստալինի արտասանած ճառով, զինված դեկտեմբերյան պլենումի վորոշումներով, զբաղված են ամենօրյա, սևագործ, քրտնաջան աշխատանքով՝ այս պատմական ցուցմունքները և վորոշումները կյանքում մարմնավորելու համար:

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի պլենումը քիչ ուշադրություն չդարձրեց նավթային արդյունաբերության հարցերին՝ ստախանովյան շարժման ծավալման կապակցությամբ: Պլենումը մատնանշեց, վոր ստախանովյան շարժումը նավթային արդյունաբերության մեջ չի զարգացած: Պլենումի այս ցուցմունքներն առաջին հերթին վերաբերում են մեզ, Ադրբեջանի բոլշևիկներիս:

Ինչպե՞ս կարող էր այդ պատահել, վոր ունենալով այնպիսի բոլշևիկյան կազմակերպություն, ինչպիսին է Բաքվինը, ունենալով նավթագործների այնպիսի հիանալի կադրեր, ինչպիսին Բաքվինը, ունենալով այնպիսի լայն ռեզերվներ ու հնարավորություններ, վորպիսին մենք ունենք,—Ադրբեջանի նավթային արդյունաբերությունը, դուրս յեկավ այսօր ժողովրդական տնտեսության հետ մնացող ճյուղերի թվում՝ ստախանովյան շարժումը ծավալելու գործում:

Ստախանովյան շարժումը Դոնբասում իր ծագման առաջին իսկ օրերից ջերմ արձագանք առաջ բերեց նավթային բանվորների լայն մասսաների մեջ:

Ստախանովյան մեթոդներն սկսեցին կիրառվել նավթի տասնյակ լավագույն մարդկանց կողմից:

Բայց, մենք, կուսակցության ղեկավարներս, չկարողացանք առաջին իսկ օրերից նավթագործների ցածրից սկսած այդ շարժումն այնպես կազմակերպել և ուղղություն տալ, վորպեսզի նավթի առանձին առաջավորների շարժումը դարձնեյինք Բաքվի նավթագործների ամբողջ բանակի մասսայական շարժում:

Մեր կուսակցական կազմակերպությունների դժբախտությունը կայանում ե նրանում, վոր նրանք չկարողացան ժամանակին վերակառուցել իրենց աշխատանքը, չկարողացան հասկանալ առաջին իսկ օրերից, վոր ստախանովյան շարժումը՝ դա բոլոր կուսակցական, տնտեսական, կոմյերիտական, պրոֆմիութենական և խորհրդային կազմակերպությունների խնդիրն ե, վոր ստախանովյան շարժումը վորոշում ե ամբողջ կուսակցական-մասսայական և կազմակերպչական-քաղաքական աշխատանքի բովանդակությունը:

Մեր կուսակցական աշխատողները չկարողացան շարժման առաջ դնել պրոֆմիութենական կազմակերպությունները, չկարողացան գլխավորել յեվ ուղղություն տալ կոմյերիտմիության աշխատանքին, չկարողացան ստախանովյան շարժմանն ի սպաս դնել մեր ակումբները, մեր պալատները, մեր բոլոր կուլտուր-սոցիալական միջոցառումներն այնպես, վորպեսզի ծավալեյին ստախանովականների փորձի լայն փոխանակումը, քաջալերեյին, պաշտպանեյին և ոգնեյին լավագույն ստախանովականներին ու առաջ մղեյին հետ մնացողներին: Մենք ինչպես հարկն ե չկարողացանք ամեն կերպ ոգնություն կազմակերպել ինժեներա-տեխնիկական աշխատողների լավագույն մասի համար, վորոնք ընդառաջում են ստախանովյան շարժմանը, բայց կարիք ունեն կուսակցական կազմակերպությունների աջակցության:

Մեր կուսակցական աշխատողները չկարողացան կազմակերպել ստախանովյան մեթոդների հիման վրա



վերակառուցվել չցանկացող տնտեսավարների, ինժեներա-տեխնիկական աշխատողների պահպանողականորեն տրամադրված մասի ժամանակին մերկացումը և անողոք վճռական հակահարվածը նրանց հանդեպ:

Մեր կուսակցական աշխատողները չհասկացան, վոր ստախանովյան շարժումն ագիտացիայի հետ, պրոպագանդի և պարզաբանման հետ միատեղ ամենորյա կազմակերպչական աշխատանք ե պահանջում մեր տնտեսական ֆրոնտի բոլոր ողակներում, բոլոր բնագավառներում այն հաշվով, վորպեսզի գոյություն ունեցող տեխնիկայից քամվի այն ամենը, ինչ նա կարող ե տալ:

Ստախանովյան շարժումը ծավալելու համար փոխանակ մոբիլիզացիայի յենթարկելու կոմունիստներին, կոմյերիտականներին, առաջավոր անկուսակցական բանվորներին և ինժեներա-տեխնիկական աշխատողների լավագույն մասին, մեր կուսակցական առանձին աշխատողները, կատարելով տնտեսավարների վատ գործակատարի դեր, նրանց յետևից հենց միայն կրկնեցին միանգամայն վոչ բոլշևիկյան աղաղակները՝ կոմպրեսորների, խողովակների, մեքենաների, ավտոտրանսպորտի և այլնի պակասության մասին, չհասկանալով այն, վոր աշխատանքի ստախանովյան մեթոդները, ստախանովյան շարժումը հնարավորություն ե տալիս յեղած տեխնիկայից ստանալ յերկու-յերեք անգամ ավելի շատ, ինչ ստացել ենք մենք մինչև հիմա:

Հենց այս ըմբռնումով կարելի յե բացատրել այն, վոր գրում ե իր զեկուցագրի մեջ ընկեր Ցոմինը՝ կուսակցության Բալախանու շրջկոմի քարտուղարը:

«Վատ ե ստախանովյան շարժման դրությունը շահագործման յերկրորդ գրուպայում: Ստախանովյան շարժման ամբողջ քաղաքական եյությունը չհասկանալու հետևանքով, այս գրուպա-

յում 168 բանվորներից փաստորեն միայն 3-ն է ստախանովական, որոնցից մեկը կուսակցության թեկնածու. գրուպայում 28 կոմունիստներ կան»:

Հարց է ծագում, թե ո՞վ է մեղավորը նրանում, որ այդ գրուպայում չեն ըմբռնում ստախանովյան շարժման քաղաքական էությունը: Ո՞վ է մեղավորը, որ 28 կոմունիստներից միայն կուսակցության մի թեկնածու յե ստախանովական: Չէ՞ որ ամենից առաջ մեղավոր է կուսակցության շրջանային կոմիտեն, որը չի կարողացել ժամանակին վերակառուցել իր աշխատանքը:

Մի ուրիշ օրինակ. Կագանովիչի շրջկոմի քարտուղար ընկ. Վարունցը փոխանակ նավթահանքում ստախանովյան շարժումը ղեկավարելու գործը կազմակերպելու պրակտիկ աշխատանքով զբաղվելու, փոխանակ այն բանի, որպեսզի մոբիլիզացիայի ենթարկեր նավթահանքի ինժեներա — տեխնիկական ուժերի լավագույն մասին՝ ստախանովականներին օգնելու և ղեկավարելու համար, դանդաղում, ի մի յե խառնում նավթահանքի բոլոր տնտեսավարներին: Իր դեկուցագրի մեջ նա գրում է.

«Չափազանց անբավարար է ինժեներա — տեխնիկական ուժերի բյուրոյի մասնակցությունը, որը իր մասնակցության ձևերը չի գտել դեռ այս գործում»:

Հարց է տրվում, իսկ ի՞նչ է արել կուսակցության շրջկոմը, որպեսզի ինժեներա — տեխնիկական ուժերի բյուրոն ժամանակին «ստախանովյան շարժման մեջ իր մասնակցության ձևը գտներ»: Ոչինչ: Դա պարզ է նրանից, որ Կագանովիչի հանքը շարունակում է գտնվել խորը ճեղքվածքում:

Ըստ երևույթին, մի քանի ընկերներ չեն հասկացել, որ, եթե ամբողջ գրուպան, ամբողջ ցեխը չի արձագանքել աշխատանքի ստախանովյան մեթոդներին,



ապա հարկավոր է գանգատվել ամենից առաջ ոչ թե նրանց չհասկանալու վրա, այլ իրենց կազմակերպչական — կուսակցական և քաղաքական — դաստիարակչական աշխատանքի թուլության վրա:

Այսպես չի լինի, ընկերներ: Ես համաձայն եմ, որ նավթահանքի տնտեսական ղեկավարությունը կարիք ունի խոշոր ուղղումների, լուրջ բոլշևիկյան քննադատության, նախազգուշացումների: Մասնավորապես, եթե ընկեր Պետրոսյանը—Կագանովիչի անվան նավթահանքի դիրեկտորը չվերակառուցի իր աշխատանքը, նա կարող է կորցնել նավթահանքի ղեկավարությունը:

Բայց հո չի կարելի Պետրոսյանի հետևում չտեսնել նավթահանքի բոլոր տնտեսավարներին և ինժեներա — տեխնիկական աշխատողներին: Հարկավոր է նրանց լավագույն մասին հավաքել իր շուրջը և նրանց հետ միասին առաջ շարժել ստախանովյան շարժումը: Ահա այսպես պետք է դնի խնդիրը քաղաքական ղեկավարը:

Ընկերներ, մենք պետք է այնպես վերակառուցենք մեր աշխատանքը, որպեսզի կուսակցության շրջկոմները, նրանց քարտուղարները ամենից առաջ զբաղվեն անմիջականորեն ներկուսակցական կյանքի գործով, քաղաքական — դաստիարակչական աշխատանքով, նավթահանքի լավագույն մարդկանց կազմակերպումով՝ ստախանովյան շարժման ծավալման համար, ստախանովականների լավագույն սպասարկման կազմակերպումով, ստախանովականների աշխատանքների համար լավագույն պայմանների ստեղծումով, ինժեներա—տեխնիկական աշխատողների լավագույն մասի օգնության ու աջակցության կազմակերպումով, ինժեներա—տեխնիկական աշխատողներին պարզաբանելով կուսակցության ու կառավարության այն բարձր պահանջները, որոնք ներկայացվում են մեզ այսօր:

Միայն ինժեներ լինելը քիչ է: Այժմ ինժեները պիտի կազմակերպիչ լինի, ուղեցույց լինի, ղեկավար լինի: Ահա թե ինչպիսի պահանջներ են ներկայացվում այժմ ինժեներներին:

Հարկավոր է ամրապես կազմակերպել կուսակցության բոլոր անդամների և անկուսակցականների պայքարը կոնսերվատորների ու սաբոտաժարարների դեմ, հայտնաբերել և մերկացնել նրանց, կանգ չառնելով անուղղելիներին և վերակառուցվել չցանկացողներին պատժելու, աշխատանքից հանելու առաջ: Ցեվ գործը հարկավոր է կազմակերպել այնպես, վորպեսզի այդ որինակների վրա դաստիարակվեն բոլորը: Իսկ այժմ, յեթե վորևէ տեղ մերկացնում են սաբոտաժարարներին, ապա այդ անում են այնպես, վոր քիչ ոգուտ է ստացվում, անում են տնավարի, յեթե կարելի է այսպես արտահայտվել, վոչ հրապարակով: Իսկ չէ՞ վոր ամեն մի մերկացում, ամեն մի պատիժ, նույնիսկ և դատական ու վարչական տույժերը պետք է ծառայեն նախ և առաջ դաստիարակության համար: Այդ պատճառով յերբ դու մերկացնում ես, այդ հասցրու մինչև կուսակցական և անկուսակցական ժողովները, մինչև մամուլը, արա այնպես, վորպեսզի մերկացումը քաղաքական էֆեկտ տա:

Կուսակցության շրջկոմների աշխատանքի վերակառուցումը չի կարելի յերևակայել առանց Ադրկոմկուսի (բ) Կենտրոնական և Բաքվի Կոմիտեների աշխատանքի ու ապարատների վերակառուցմանը: Չէ՞ վոր կուսակցության շրջկոմի աշխատանքում յեղած սխալներն ու թերությունները հաճախ բնորոշ են նաև Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բաքկոմի ապարատների համար:

Ստախանովյան շարժումն առաջին իսկ որերից լայն արձագանք գտավ նավթագործ բանվորների մեջ: Բայց այդ չի կարելի ասել տնտեսական և ինժեներա-



տեխնիկական աշխատողների մասին, վորոնց զգալի մասը մինչև այսոր էլ դեռ չի վերակառուցել իր աշխատանքը:

Ստախանովյան շարժման մեջ իրենց կազմակերպչական դերը չհասկանալը, անշարժությունն ու սաբոտաժը՝ առանձին տնտեսավարների և ինժեներա-տեխնիկական աշխատողների կողմից՝ իրենց զգացնել են տվել նավթային արդյունաբերության մեջ ստախանովյան շարժման ծագման առաջին իսկ որերից:

Պլենումի վորոշման մեջ ասված է.

«Արդյունաբերության և տրանսպորտի մի քանի տնտեսավարներ չեն հասկացել ստախանովյան շարժման իմաստը և գերի յեն մնացել մեր ձեռնարկությունների իջեցված նախագծային կարողություններին, կարողություններ, վորոնք իր ժամանակին հաշվի յեն առնված յեղել նկատի ունենալով մեր բանվորների ու տեխնիկական կադրերի հետամնացությունը: Հենց այդ փաստը իջեցված նախագծային կարողություններին հասնելու առթիվ առաջացած ինքնաբավարարվածության հետ միասին, հասցրեցին այնտեղ, վոր մի քանի աչքի ընկնող և անցյալում յերկրի ինդուստրացման ասպարեզում անտարակույս ծառայություններ ունեցող տնտեսավարներ վոչ միայն չկարողացան գլխավորել ստախանովյան շարժումը, այլ նույնիսկ նրան արգելակ դարձան»:

Վորոշման այս մասը, հարկավոր է ուղղակի ասել, վերաբերվում է նաև մեր շատ նավթագործ տնտեսավարներին, վորոնք իր ժամանակին վոչ վատ աշխատանքի համար կուսակցության կողմից բարձրացվեցին մեծ բարձրության վրա:

Այդ ընկերներից վոմանք, յերևի, չեն հասկացել, վոր հարկավոր չէ հանգստանալ ձեռք բերվածով, գոռոզանալ, հանգստանալ դափնիների վրա, այլ անընդհատ շարժվել առաջ, հետ չմնալով մեր կյանքի

կողմից առաջադրվող հարաճուն խնդիրներից և պահանջներից:

Ցավ ահա այսօր, այդ ընկերներից վոմանք չեն գտնվում ստախանովյան շարժման կազմակերպիչների առաջավոր շարքերում:

Վերցնենք Որջոնիկիձենեֆթտրեստը: Տրեստն ամբողջությամբ վերցրած այսօր հանույթի պլանը կատարում է 83 տոկոսով և հորատումը՝ 67,2 տոկոսով: Հիմնականում այս տրեստը տապալեց պլանի կատարումը 1935 թվին: Այս տրեստի կազմի մեջ մտնող վոչ մի նավթահանք չի կատարում այսօր վոչ հանույթի պլանը, վոչ էլ հորատման պլանը: Նույնիսկ այնպիսի նոր նավթահանքում, ինչպիսին Ջըխն է, վորտեղ կան հիանալի հորատող վարպետներ և հիանալի սարքավորում, հորատության պլանի կատարումը 60 տոկոսից չի անցնում: Իսկ չէ՞ վոր պլանի կատարումը մեր նվազագույն պարտավորությունն է կուսակցության և կառավարության առջև: Պլանի հասարակ կատարումով այժմ վոչ վոքի չես զարմացնի: Պլանի կատարումը — դա միայն նվազագույն պարտավորությունն է, այլ վոչ թե առանձին ծառայություն: (Բուռն ծափահարություններ):

Որջոնիկիձենեֆթում պլանի չկատարելն ասում է, վոր Կագանովիչի, Որջոնիկիձեյի անվան, Սուրախանու, Ջըխի նավթահանքերում հորատության և նավթահանության ստախանովականների առկայությամբ հանդերձ տնտեսական ղեկավարությունը չի գլխավորել, չի կազմակերպել, ուղղություն չի տվել ստախանովյան շարժմանը, այդ շարժումը չի դարձրել նավթահանքերի և ամբողջությամբ վերցրած տրեստի բոլոր բանվորների ու ինժեներա — տեխնիկական աշխատողների մասսայական շարժում:

Որջոնիկիձենեֆթի տրեստի իր իսկ հաշիվներով, հենց միայն կոմպրեսորային տնտեսության ռացիոնալիզացիան, վորտեղ կան 170 կոմպրեսորներ, հնարավորություն կտար լրացուցիչ կերպով ստանալու 26 կոմպրեսորների հավասար մի կարողություն:

Իսկ ի՞նչ է արել տրեստի ղեկավարությունը՝ հանձին ընկեր Բորցի, այդ լրացուցիչ կարողությունն ստանալու համար: Վոչինչ, կամ շատ քիչ բան:

Ավելի լավ չէ ստախանովյան շարժման կազմակերպման և ղեկավարության գործի վիճակը տրեստների մյուս ղեկավարների մեծ մասի մոտ:

Ստալիննեֆթի ընկերները վորոշել են մերկ վարչարարությամբ և չինովնիկական հրամաններով «ծավալել», «կարգավորել» ստախանովյան շարժումը:

Ահա ձեզ տրեստի 1935 թվի դեկտեմբերի 25-ի № 346-ա մեծածավալ, 7 էջի վրա գրված հրամանը:

Այդ հրամանով ստեղծվում է 11 հանձնաժողով.

1. Աշխատանքի հերթափոխային վճարման սիստեմի աշխատանքի մշակման հանձնաժողով.

2. Նավթահանքերում հրահանգչության կազմակերպման հանձնաժողով.

3. Հորատման արտադրական հաշվառման մեթոդների ու ձևերի վերակառուցման հանձնաժողով.

4. Ստորյերկրյա նորոգման բրիգադի աշխատանքի տեղի կազմակերպման հանձնաժողով և այլն և այլն:

Կենդանի, անմիջական աշխատանքի փոխարեն ստեղծվում են բյուրոկրատական հանձնաժողովներ:

Հրամանը ստորագրել է ի տեղի տրեստի կառավարիչի ընկ. Ղազարյանը:

Ընկեր Պետերսոնը կարող է ասել, թե ինքը չի ստորագրել հրամանը: Յես նրան հարց կտամ՝ ընկեր Պետերսոնը կարդացե՞լ է այդ հրամանը, և յեթե կարդացել է, ապա ի՞նչ միջոցներ է ձեռք առել:

Ընկեր Պետերսոնը պետք է անհապաղ բեկանի այդ հրամանը:

Համեմատաբար վատ չի դրված ստախանովյան շարժման ղեկավարությունը Լենիննեֆթտրեստում: Ճիշտ է, այնտեղ թերությունները դեռ քիչ չեն, բայց այդ յերկու տրեստների համեմատությամբ գործն այնտեղ վատ չե դրված:

Չեր խանգարի, վոր ընկ. Բոյցն ու ընկ. Պետերսոնը նայեյին Լենիննեֆթտրեստի նավթահանքերը: Նրանք այնտեղ վատ որինակներ չեյին վերցնի իրենց աշխատանքի համար:

Յես կարծում եմ, վոր և ընկ. Բոյցը և ընկ. Պետերսոնը, և մյուս ընկերներն ամեն անհրաժեշտը կանեն ստախանովյան շարժման կազմակերպման գործում իրենց սխալները և թերություններն ուղղելու համար, մեր սոցիալիստական տնտեսության լավագույն կազմակերպիչների շարքում դարձյալ առաջավոր տեղերը գրավելու համար:

Նավթահանքերում ստախանովյան շարժման ծավալման հենց առաջին քայլերը ցույց տվին, վոր բոլոր խոսակցությունները «նավթի սպեցիֆիկ պայմանների» մասին, վորոնք իբր թե հնարավորություն չեն տալիս ծավալելու ստախանովյան շարժումը նավթային գործի բոլոր ճյուղերում, յելնում են մեզ խորթ միջավայրից: Այդ խոսակցությունների կրողները մեր մարդիկը չեն:

Մեզ մոտ ստախանովյան մեթոդի կիրառման հենց առաջին քայլերը ցույց տվին, վոր Բաքվի նավթային արդյունաբերության մեջ, նրա ներկա տեխնիկական հագեցվածության պայմաններում կան հսկայական ռեզերվներ, վորոնք ոգտագործելով մենք կարող ենք տալ հորափորման ավելի մեծ արագություններ, քան թե ներկայումս տալիս ենք և կարող ենք զգալիորեն բարձրացնել նավթահանությունը:

Ստախանովյան որը, վոր անց է կացրվել Լենինյան հանքի հորափորման առաջին գրուպայում դեկ-



տեմբերի 28-ին, հնարավորություն է տվել այդ որվա հորափորման պլանը կատարել 210,3 տոկոսով:

Ստալինի անվան նավթահանքը, աշխատանքի ստախանովյան մեթոդ գործադրելով, վերջին յերկու և կես ամսում միջին որական նավթահանությունը 1910 տոննից բարձրացել է 3140 տոննի, հենց դրանով ել հերքելով մի քանի յերկրաբանների «թեորիան», թե Բիբի–Հեյբաթի հին հրապարակը սպառվել է:

Այս բոլորը խոսում է այն մասին, վոր յեթե ընկերներ Պետերսոնը, Բոյցը, Կուզմինը, Կրիլովը, նավթահանքերի բոլոր դիրեկտորները, գրուպաների բոլոր վարիչները բոլշևիկորեն, ձեռները քշտած, ստախանովյան շարժման ծագման հենց առաջին որերից վերանայեյին սարքավորման ամբողջ ֆոնդը, իրենց տրամադրության տակ գտնվող բոլոր նյութական հարստությունները, ինչպես հարկն է, տիրաբար, ստալինյան ձևով դասավորեյին մարդկանց, աշխատանքի ճիշտ բաշխում կատարեյին, ճիշտ կազմակերպեյին աշխատանքի տեղը, կարգավորեյին հաշվառքը, գործը դնեյին պատշաճ գիտական բարձրության վրա, ստեղծեյին նավթային մեխանիզմի բոլոր մասերի աշխատանքի կարգավորված ռիթմ, մենք այսոր կունենայինք շատ ավելի մեծ հորափորություն և նավթահանություն վոչ միայն Լենինյան նավթահանքի հորափորման առաջին գրուպայում և Ստալինյան նավթահանքում, այլև բոլոր նավթահանքերում, բոլոր տրեստներում:

Կուսկազմակերպության և առաջին հերթին տրեստավարների խնդիրը կայանում է հենց նրանում, վորպեսզի իրացնեն այն բոլոր հնարավորությունները, վոր պարունակում է իր մեջ ստախանովյան շարժումը:

Նավթի վերաբերմամբ ստախանովյան աշխատանքի բազմաթիվ որինակներից կբերեմ միայն յերկուսը:

Ահա ձեզ ընկ. Շիշկանովի աշխատանքի փորձը, որը հիանալի դպրոց է հանդիսանում մեր շատ տնտեսավարների և ինժեներա-տեխնիկական աշխատողների համար, մի փորձ, որ կուսակցության Ազիզբեկովի շրջանային կոմիտեն կարողացել է ընդհանրացնել՝ ամենահետաքրքիր փաստաթղթի ձևով:

Թույլ տվեք կանգ առնել այդ փորձի վրա:

№ 442 հորը նախագծված էր հասցնելու Ներքին-Քիրմաքու շերտի հորիզոնին, 1690 մետր նախագծային խորությամբ: Հորի կոնստրուկցիան և սարքավորումն ամենասովորական էին:

Հորի փորելն սկսելուց առաջ սեմինար անցկացվեց հորափորման գրուպայի վարիչի, տրեստի կառավարիչի, հանքի դիրեկտորի տեղակալի ներկայությամբ:

Այդ սեմինարում բացի ինստրուկտաժից քննարկվեցին և մշակվեցին նորմաներն ու գնահատականները:

Շնորհիվ այն բանի, որ՝

1. Վարպետ Շիշկանովը № 442 հորում կիրառեց նոր սոցիալիստական նորմաներ, որոնք շատ ավելի բարձր են ներկայիս նորմաներից, թե գործիքը բարձրացնելիս և թե փորելիս.

2. Մանրազննին և ժամանակին խնամք տարվեց բոլոր սարքավորման և գործիքների վերաբերմամբ (հորափորման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում սարքավորման ոչ մի դետալ և ոչ մի գործիք չնորոգվեց), լիովին օգտագործվեց նրանց կարողությունը.

3. Կարգավորված էր աշխատանքն այդ բրիգադի անդամների միջև, որոնք արդեն միասին աշխատում էին 2 տարուց ավելի, և վերջապես

4. Գործադրվեցին ինժիներ Սկաչկովի գտվածքի դուրեր.



5. Բրիգադի ամբողջ կազմը տեխմինիմումի գերազանց քննություն տվեց,—վարպետ Շիշկանովը և նրա բրիգադը տվին միջին առեվտրական արագություն՝ 712 մետր ստանոկ-ամսում, յերեքասյուն կոնստրուկցիայով և հորի փորումն ավարտվեց 22 օր ժամկետից առաջ:

Ահա ձեզ և Իլյիչի անվ. նավթահանքի մոնտաժային — ինստրումենտալ բաժնի վարիչ ինժեներ Մեժլումովի աշխատանքը:

Ընկ. Մեժլումովը մտցրել է մի շարք ռացիոնալացման միջոցառումներ և գյուտեր.

1. Դուրերի «պոբեդիտով» զոդելու մեթոդը՝ բնական գազի կիրառումով.

2. Զուգակցական էլեկտրամատորներ՝ զորությունը մեծացնելու համար.

3. Հարմարություն՝ բլոկները կրոնբլոկների վրայից քաշելու դեմ.

4. Հարմարություն՝ կանատի կտրվելը կանխելու համար.

5. Էլեկտրալեբյոդկա, որն արագացնում է հորերի մոնտաժը յերկու և ավելի անգամ:

Դրա հետևանքով՝ ընկ. Մեժլումովին յենթակա բաժինը սիստեմատիկորեն գերակատարում է իր պլանները:

Իսկ չէ՞ որ այդպիսի բանվոր Շիշկանովներ յեվ ինժեներ Մեժլումովներ մեզ մոտ միավորներ և տասնյակներ չեն: Նրանք բավականին ավելի շատ են: Բանը նրանումն է, որ մեր տնտեսավարները կազմակերպեն այդ Շիշկանովներին ու Մեժլումովներին, գլխավորեն նրանց և այդ տասնյակների ու հարյուրների շարժումը դարձնեն նավթագործների՝ ինժեներների, տեխնիկների ու բանվորների ամբողջ բանակի շարժում:

Կուսակցական կազմակերպությունների խնդիրը

կայանում է նրանում, որ օգնեն տնտեսավարներին՝ կատարելու այդ գործը:

Ես ուզում եմ, ի միջի այլոց, մի քանի խոսք ասել թերթերի մասին: «Բակինսկի Ռաբոչին» պետք է իր էջերը գլխավորապես նվիրեր ստախանովականների փորձի ընդհանրացմանը, զետեղեր, օրինակ, Շիշկանովի հոդվածը: Թերթն այդ բանը չի արել: Իսկ Շիշկանովի փորձն արժանի յե, որ մեր մամուլը չխնայեր այդ գործի համար իր էջերը:

Գիտական աշխատողների կոլեկտիվի հաշիվներով՝ յեթե մի շարք ռացիոնալացման միջոցառումներ կիրառենք և, մասնավորապես, կոմպրեսորի ընդունման վրա ավելորդ ճնշում ստեղծենք, կոմպրեսորների ունեցած պարկով (իսկ դրանք այսոր 500-ից ավելի յեն) կարելի յե Բաքվում նավթահանությունն օրական ավելացնել 10.000 տոննով:

Նույն գիտական կոլեկտիվի հաշիվներով մեր ունեցած խորխաքաշ նասոսների օգտագործումը կարող է օրական միջին նավթահանությունը մեծացնել 7.000 տոննով:

Այդ թվերը ցույց են տալիս, որ յեթե մեր տնտեսավարները փոխանակ շատ ժամանակ վատնելու լրացուցիչ սարքավորում ստանալու անհրաժեշտության «հիմնավորման» համար, այդ ժամանակը հատկացնեյին ունեցած սարքավորումը լրիվ օգտագործելու պայքարին, նրանք կկարողանային շատ ավելի մեծացնել նավթահանությունը:

Լեբյոդկաների, ամբարձակների, ռոտորների, դուրերի, վերտլյուգների և այլն ճիշտ և լրիվ օգտագործումը հնարավորություն է տալիս համենայն դեպս կրկնապատկելու փորման արագությունը, որը վճռական է նավթում:

Ասածս հաստատելու համար բավական է մի քանի փաստեր բերել.



Դուրի աշխատանքը.

Ինչպես հայտնի յե, միջին փորումը մի դուրի համար մեզ մոտ կազմում է 25–27 մետր: Բայց ահա Լենինյան նավթահանքի դուրային ցեխի ստախանովական զոդող ընկ. Մերկուլովն այնպես է զոդում դուրերը, որ նրա մոտ մի դուրը միջին հաշվով անցնում է 100 մետր, իսկ առանձին դեպքերում 250-ից մինչև 300 մետրը:

Նույնպես այնտեղ, այդ ցեխում զոդող Բակուլինինի մոտ մեկ դուրն անցել է 301 մետր և այլն:

Վարպետ – ինժեներ ընկեր Սարոնի մոտ (Ազիզբեկովի անվան նավթահանք) մի դուրով փորել են 618 մետր:

Այդպիսով դուրս է գալիս, որ մի դուրով կարելի յե փորել 10 անգամ ավելի, քան թե հիմա, կրճատելով գործիքի իջեցումը և բարձրացումը:

Կամ վերցնենք ռոտորի պտույտների քանակը: Վարպետներ Շիշկանովը և Բոժեվն Ազիզբեկովի անվան նավթահանքում աշխատում են ռոտորի մինչև 120 պտույտներով: Վարպետ Շիխիեն Օրջոնիկիձեյի անվան նավթահանքում աշխատել է ռոտորի 134 պտույտով: Վարպետ Բաբա Կաֆարը տվել է 100–110 պտույտ: Մայնեվթում վարպետներ Նիկիտինը և Շիշկովը տալիս են ռոտորի մինչև 300–320 պտույտ:

Այդպիսով դուրս է գալիս, որ կարելի յե ռոտորին ևս ստիպել աշխատելու հսկայական եֆեկտով:

Այնուհետև գործիքի իջեցումն ու բարձրացումը.

Վարպետ Շիշկանովը նորմայի 28 ծնկի փոխարեն չորս արագանոց լեբյոդկայի չորրորդ արագությամբ բարձրացրել է 42-ը:

Մոլոտովի անվան նավթահանքի շահագործման առաջին գրուպայի բրիգադիր Կուդյուկովի հերթը 48 ժամում պետք է իջեցներ 1116 մետր 4 դյույմանոց խողովակ և 402 մետր մեկ և կես դյույմանոց

խողովակ: Նա այդ աշխատանքը կատարել է 12 ժամում, այսինքն տվել է 400 տոկոս:

Մեքենավար Ռահիմովից և փականագործներ Ջաբարովից ու Ռահիմ Մամեդ Ռզայից կազմված կոմպրեսորային բրիգադը փորատային արմատուրան հավաքել է նորմայի 5 ժամի փոխարեն 57 րոպեյում, այսինքն 500 տոկոսից ավելի:

Կանգ կառնեմ փորման մի պրոցեսի վրա ևս—ցեխահան նասոսի աշխատանքի վրա:

Միկոյանի նավթահանքի վարպետ Բաղդասարովը ցեխահան նասոսի բանումը սովորական 34–40-ի փոխարեն հասցրել է մինչև 52-ի:

Ցեվ շատ ու շատ այդպիսի օրինակներ այսօր մենք պարտավոր ենք դարձնել մասսայական երևույթներ:

Լենինի անվան նավթահանքում անց է կացվել ստախանովյան և ոչ ստախանովյան հորերի բանվորական ժամանակի հաշվեկշռի համեմատություն:

| | Ստախանովյան հորերում № 807 · Գրիգորյան № 749—Ա. [illegible] № 855 - [illegible] | 1935 թ. 3-4 ժամանակահատվածում փոխված ոչ ստախանովյան 21 հորում |
|---|---|---|
| | Տոկոսներ | Տոկոսներ |
| Զուտ հորափորում | 49,4 | 31,4 |
| Ջրի փակումը ընդարձակումը | 2,5 | 5,18 |
| Սյունի օջեցումը | 7.55 | 4.97 |
| Ընդամենը արտադրական ժամանակ | 94.35 | 76.35 |
| Ավարիաներ և բարդություններ | 1,08 | 17,08 |
| Պարապուրդներ | 1,27 | 3,14 |
| Ընդամենը ոչ արտադրական ժամանակ | 5,65 | 23,65 |



Ահա ձեզ անսպառ ռեզերվ, ահա թե ուր պետք է ուղղել, մեր տնտեսավարների, մեր կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը, ուժերը:

Ստախանովականների համամիութենական առաջին խորհրդակցությունում ընկեր Ստալինն ասել է.

«Այդ շարժումը փշրում է տեխնիկայի նկատմամբ յեղած հին հայացքները, փշրում է հին տեխնիկական նորմաները, հին նախագծային կարողությունները, հին արտադրական պլանները և պահանջում է ստեղծել նոր, ավելի բարձր տեխնիկական նորմաներ, նախագծային կարողություններ, արտադրական պլաններ»:

Ընկեր Ստալինի այդ ցուցմունքները, վորոնք հաստատվել են ստախանովյան շարժման ամբողջ ընթացքով մասն կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի դեկտեմբերյան պլենումի վորոշման մեջ, վորպես մեր հիմնական անհետաձգելի խնդիրներից մեկը:

Ահա թե ինչ է ասված Համկոմկուսի (բ) Կենտկոմի պլենումի վորոշման մեջ.

«Անհրաժեշտ է այժմյան տեխնիկական նորմաները, վորպես հնացած, փոխարինել ավելի բարձր նորմաներով և համապատասխան կերպով փոխել արտադրման նորմաները՝ նրանց վորոշ բարձրացման խմաստով, սակայն այն հաշվով, վոր պետղի պրոգրեսիվ գործարքի պայմաններում պահպանվեն ներկայիս գնահատումները, իսկ աշխատավարձի ֆոնդը ստախանովյան շարժման աճի շնորհիվ ավելացվի: Կենտկոմի պլենումը դատապարտում է արտադրման նորմաների սահմանման գոյություն ունեցող տխտեխն ու պրակտիկան, վորպես ԽՍՀՄ առաջավոր տեխնիկայի ձեռք բերած մակարդակին անհամապատասխան և աշխա-

տանքի արտադրողականության հետագա վերելքի խնդիրներին չհամապատասխանող»:

Իսկապես, ընկերներ, ի՞նչ է կատարվում մեզ մոտ:

Վերցնենք նույնիսկ ամենահետամնաց տեղամասը մեր նավթային արդյունաբերության մեջ, այսպես կոչված ոժանդակ ձեռնարկությունները: Օրինակ բերեմ.—

Լենինի անվան նավթահանքում ստանոկների հավաքման բրիգադի բանվորների ամբողջ 100 տոկոսը նորմաները կատարում են ավելի քան 150 տոկոսով: Բուրգագործ — հյուսների բրիգադներում բանվորների ամբողջ 100 տոկոսը նորմաները կատարում են ավելի քան 150 տոկոսով:

Մոլոտովի անվան մեխանիկական արհեստանոցում նորմաների կատարումը փականագործական ցեխում մինչև 90 տոկոս կատարում է բանվորների 7 և մինչև 125 տոկոս—բանվորների 9 տոկոսը, մինչև 150 տոկոս—բանվորների 24 տոկոսը, մինչև 175 տոկոս—բանվորների 15 տոկոսը, 175 տոկոսից ավելի—բանվորների 31 տոկոսը:

Մոտավորապես նույնն է նկատվում և մյուս ցեխերում: Հարց է տրվում՝ հապա այդ ի՞նչ նորմաներ են: Ի՞նչի յեն պետք նրանք: Այդպիսի նորմաները քննադատության չեն դիմանում:

Ահա թե ինչու մեզ հարկավոր է, ղեկավարվելով կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի պլենումի վորոշումով՝ անհապաղ անցնել արտադրման նորմաների վերանայման նախապատրաստությանը:

Կուսակցության Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի վորոշումն ասում է.

«Նորմավորման աշխատանքը և նրա դրության համար պատասխանատվությունը դնել ցեխի և ձեռնարկության ինժեներա—տեխնիկական անձնա-



կազմի վրա՝ ձեռնարկության դիրեկտորի անմիջական ղեկավարությամբ»:

Մեր տնտեսավարները չեն կարող ասել, վոր նրանք իրականում անմիջականորեն ղեկավարում են այնպիսի կարևորագույն տեղամաս, ինչպես նորմավորումը: Ընկ. Ղազարյանի հրամանում, որինակ, մենք տեսանք, վոր արտադրման նորմաները հանձնարարված են հանձնաժողովին: (Ծիծաղ):

Խնդիրն այն է, վորպեսզի այդ գործը կենտրոնացնենք անմիջապես տրեստների, նավթահանքերի, գրուպաների պատասխանատու ղեկավարների ձեռքում: Մեր կուսակցական ու պրոֆմիութենական կազմակերպությունները պետք է ամուր կերպով ոգնեն տնտեսավարներին՝ այդ գործն իրենց ձեռքը վերցնելու և

«Լայն կերպով աշխատանքի ներգրավել ստախանովականների կադրերին՝ ձեռնարկություններում արտադրման նոր նորմաներ սահմանելու համար»: (Պլենումի բանաձևից):

Արտադրման նորմաների սերտ կապակցությամբ դրվում է աշխատավարձի սիստեմի ճիշտ կազմակերպման հարցը: Ուղղակի պետք է ասել, վոր այդ հարցում նավթային արդյունաբերության մեջ մեծ խառնաշփոթություն կա:

Մինչև այժմ մեզ մոտ ամենուրեք չէ, վոր անց է կացվել պրոգրեսիվ գործարքը, աշխատավարձի սիստեմը չի անհատականացնում առանձին աշխատողին, առանձին խմբերին, «ընդհանուր քաժնի սիստեմի» տարրերը մինչև այժմ դեռ տեղ ունեն: Դրանց պետք վերջ տալ:

Ստախանովականների համամիութենական առաջին խորհրդակցությունում ընկեր Ստալինն ստախանովականներին բնութագրելով վորպես նոր, կուլտուրական ու տեխնիկապես գրագետ մարդկանց, իրենց գործի տեխնիկային տիրապետած մարդկանց, ասում էր.

«Իսկապես, դիտեցեք ընկեր ստախանովականներին: Այդ ի՞նչ մարդիկ են: Դրանք գլխավորապես յերիտասարդ կամ միջին տարիքների բանվորներ և բանվորուհիներ են, կուլտուրական ու տեխնիկապես զինված մարդիկ են, որոնք ճշգրտության ու ճշտապահության օրինակներ են տալիս աշխատանքում, կարողանում են աշխատանքի մեջ գնահատել ժամանակի գործոնը և սովորել են ժամանակը հաշվել ոչ միայն րոպեներով, այլև վայրկյաններով:

Նրանց մեծ մասն անցել է այսպես կոչված տեխնիկական մինիմումը և շարունակում է լրացնել իրեն տեխնիկական կրթությունը»:

Ընկեր Ստալինի այդ ցուցմունքները դրվել են կուսակցության Կենտրոնական Կոմիտեի դեկտեմբերյան պլենումի որոշումների հիմքում, որտեղ ասված է.

«Անհրաժեշտ է օգնել առանց բացառության բոլոր ստախանովականներին լրացնելու իրենց տեխնիկական գիտելիքները, նրանց համար ստեղծելով հատուկ տեխնիկական դասընթացներ, որոնք արտադրությունից կտրվել չեն պահանջում:

Անհրաժեշտ է սիստեմատիկաբար ընդարձակել բանվորների ու բանվորուհիների շրջանը, որոնք յենթակա յեն տեխնիկական մինիմումի պարտադիր ուսուցման:

Վերջապես անհրաժեշտ է տեխնիկական մինիմումի ուսուցումը դարձնել ընդհանուր և պարտադիր բոլոր բանվորների ու բանվորուհիների համար, այդ կարևորագույն գործը յենթարկելով բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակը մինչև ինժեներա-տեխնիկական աշխատանքի աշխատողների մակարդակին բարձրացնելու խնդրին»:



Պատահական չէ, ընկերներ, որ ստախանովյան շարժումը ծագեց ածխային Դոնբասում, որտեղ կադրերի աճեցման ու դաստիարակման մասին առաջնորդի լոզունգի իրագործման համար ընկեր դոնբասցիները մի ամբողջ շարք միջոցառումներ կիրառեցին իրենց բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման համար, մասնավորապես բացառիկ ուշադրություն դարձրին տեխմինիմումի անցման հարցերին, բանվորների տեխնիկական ուսուցման հարցերին:

Մի քանի թվեր վառ կերպով բնորոշում են այդ:

Դոնբասում պետական տեխնիկական քննություն անցան 154 հազար ածխահատ, մետաղագործ, քիմիկ բանվորներից 63 հազար հոգի քննությունը տվել են «գերազանց», 70 հազար հոգի՝ «լավ»: Հետևաբար բանվորների ճնշող մասսան՝ 90 տոկոսից ավելին դեռ մինչև ստախանովյան շարժումը ցույց են տվել, թե նրանք ինչպես են պայքարում տեխնիկային տիրապետելու համար:

Իսկ ինչպե՞ս է դրությունը մեզ մոտ:

Նավթային տրեստների 10·438 բանվորներից, որոնք տեխնիկական մինիմումի քննությունը տվել են մինչև հունվարի 1-ը, միայն 1736 հոգի կամ 17,3 տոկոսը տվել են «գերազանց», 3370 հոգի, կամ 33,7 տոկոսը՝ «լավ», 4212 հոգի, այսինքն 42,2 տոկոսը՝ բավարար և, վերջապես, 686 հոգի, կամ 6,8 տոկոսն՝ անբավարար:

Ահա թե, ընկերներ, որտեղ է ստախանովյան շարժման թույլ զարգացման հիմնական պատճառներից մեկը նավթային արդյունաբերության մեջ: Կուսակցության շրջկոմները յեվ նրանց առաջին քարտուղարները, տրեստների կառավարիչները, նավթահանքերի դիրեկտորները պետք է անմիջականորեն զբաղ-

վերջին այդ գործով: Իսկ ըստ եյության դուրս յեկավ, վոր դա վերավստահվել է յերկրորդական մարդկանց:

Յեթե մենք իսկապես ուզում ենք ծավալել ստախանովյան շարժումը, իսկ մենք պարտավոր ենք այդ անել, ապա պետք է սկսենք գլխավորից — տեխնիկական ուսուցման անհապաղ անհրաժեշտ բարձրության հասնելուց, ինչպես այդ պահանջում է կուսակցության Կենտկոմի պլենումի վորոշումը:

Տեխնիկական ուսուցման գործով պետք է զբաղվեն մեր կուսակցության շրջկոմների քարտուղարներն իրենք անմիջականորեն, նավթահանքերի, գործարանների ու ֆաբրիկների դիրեկտորներն իրենք անմիջականորեն, տրեստների կառավարիչներն իրենք անմիջականորեն, և վոչ թե այդ հանձնարարեն հանձնաժողովներին:

Տրեստների կառավարիչները, նավթահանքերի դիրեկտորները, գրուպաների վարիչները և կուսակցության շրջանային կոմիտեների առաջին քարտուղարները պարտավոր են անընդհատ հետևելու, թե ինչպես է աճում յուրաքանչյուր ստախանովականի, յուրաքանչյուր բանվորի կուլտուր — տեխնիկական մակարդակը:

Յեթե մենք, հիրավի, ուզում ենք մոտ ժամանակներս ստախանովյան շարժումը ծավալել մեր նավթային արդյունաբերության բոլոր տեղամասերում, ապա առաջին հերթին պետք է սկսենք մեր բանվորների կուլտուր — տեխնիկական հետամնացության վերացումից, ինչպես այդ պահանջում է կուսակցության Կենտկոմի պլենումի վորոշումը:

Կենտրոնական Կոմիտեյի դեկտեմբերյան պլենումում ընկ. Որջոնիկիձեն ասել է նավթագործների մասին.

«Վորպեսզի զգացվի, վոր նավթում կա ստախանովյան շարժում, համենայն դեպս նրանք պետք է անեն այնքան, վորքան արել է ածխային Դոնբասը»:



Ընկերներ, ինչպես դուք գիտեք, ածխային Դոնբասում ստախանովյան շարժման ընթացքում ածխի հանույթը 175 հազար տոննից հասցրել է 245 հազար տոննի:

Ածխային Դոնբասը, վորտեղ ծնունդ է առել ստախանովյան շարժումը, այսոր ունի վոչ միայն տասնյակ հազարավոր ստախանովականներ, նա ունի նաև հարյուրավոր և հազարավոր հրաշալի ղեկավարներ, վորոնք գլխավորում են ստախանովյան շարժումը. Նա արդեն առանձին բանվորների ու հերթերի աշխատանքի ստախանովյան մեթոդներից անցնում է ստախանովյան որերի, կազմակերպում է ստախանովյան հընգորյակներ, պատրաստում է ստախանովյան ամիսներ:

Մենք պետք է կրկնապատկենք, յեռապատկենք ստախանովյան շարժման կազմակերպման ու ղեկավարման աշխատանքի տեմպերը, վորպեսզի հետ չմնանք անընդհատ առաջ շարժվող սոցիալիստական Դոնբասից:

Իսկ դրա համար հարկավոր է, վորպեսզի մեր տրեստների կառավարիչները, նավթահանքերի դիրեկտորները, գլխավոր ինժեներները, գրուպաների ու ցեխերի վարիչները նույնպես կարողանան, ինչպես Դոնբասի կառավարիչները, գլխավոր ինժեներները, շախտերի վարիչները՝ կոնկրետ, անձնական որինակով ցույց տալ բանվորներին ու ստախանովականներին և պատմել նրանց, թե ինչ պետք է անել և ինչպես պետք է աշխատել, վորպեսզի տեխնիկայից քամեն հնարավոր առավելագույնը:

Դրա համար հարկավոր է, վորպեսզի նրանք վոչ թե «հարձակումներով», վոչ թե մակերեսայնորեն, այլ խորապես և կոնկրետ ուսումնասիրեն ըմբռնողությու

րի փորձը, ստախանովականների փորձը: Օրինակ, ինչո՞ւ նրանցից ամեն մեկը մի յերկու հերթ չնստի լավագույն ստախանովյան հորում, մինչև ամենամանր մանրամասնությունը չզննե, թե ինչպես են աշխատում նրանք, վորպեսզի ընդհանրացնի նրանց փորձը: Յեվ մի յերկու հերթ չլինել մի վորևե հետ մնացող հորում, դիտել նրա աշխատանքը և դրանից հետո կոնկրետ կերպով ցույց տալ փորման գրուպայի վարպետին, ինժիներին, թե ինչ պետք է անի նա, վորպեսզի հետ մնացող բրիգադները ներս քաշի ստախանովյան շարժման մեջ:

Դրա համար հարկավոր է, վորպեսզի նրանք զգայուն կերպով վերաբերվեն մարդկանց, կարողանան նրանց կազմակերպել, կարողանան նրանց բորբոքել պայքարի խանդավառությամբ. ամեն և բոլոր տեսակի դժվարությունները հաղթահարելու, աշխատանքի նոր, ավելի բարձր ցուցանիշների համար:

Մեր շրջանային կուսակցական կոմիտեները, մեր տնտեսավարներն անդադար հետևելով Դոնբասին, մյուս առաջավոր յերկրներին ու մարդերին ստախանովյան շարժումը ծավալելու գործում, պետք է ամենամոտ ժամանակներս հասնեն այն բանին, վորպեսզի վոչ միայն հետ չմնան, այլ դուրս գան առաջին շարքերը: Դրա համար Բաքվի կազմակերպությունը, Բաքվի բանվորները բոլոր հիմքերն ունեն:

Այդ գործը վերաբերվում է վոչ միայն նավթահանող տրեստներին, այլև բոլոր տրեստներին, վորոնք մտնում են Ադրբեջանի նավթային կոմբինատի սիստեմի մեջ:

Նավթահանքերի ոժանդակ ձեռնարկություններում սկսված ստախանովյան շարժումն անսպառ ռեզերվներ ու հնարավորություններ է հայտնաբերում: Իսկ այնպիսի հզոր, տեխնիկապես զարգացած ձեռնարկություններում, ինչպես Ազնեֆթի մեքենաշինական գործարանները, Պրոմտեխստրոյը, Ազնեֆթեմաքը, ՈՒՊԴ և մյուսներն են — այդ ռեզերվներն ու հնարավորություններ կան կրկնակի — յեռակի: Կարիք չկա ասելու մեր նավթավերամշակման գործարանների մասին, վորոնք հագեցված են նորագույն տեխնիկայով:

Կանգ կառնեմ նաև յերկաթուղային տրանսպորտի վրա, վորն ստախանովյան շարժման ծավալման գործում արդեն հասել է առաջին դասի հաջողությունների:

Անդրկովկասյան յերկաթուղու մեքենավարների մեջ առաջին և լավագույն ստախանովականն ընկ. Գրիգորի Վյազմիտինովն է, Բաքվի դեպոյից:

Յերբ մեքենավար Վյազմիտինովը, վորը վերջերս պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով, հասավ մի ժամում 41,8 կիլոմետր տեխնիկական արագության՝ գրաֆիկով նախատեսված 32,2-ի փոխարեն, ապա «սահմանականները» նրա հաջողությունը պատահական համարեցին: Նրանք փորձում էին ապացուցել, վոր մի ժամում 41 կիլոմետր սիստեմատիկաբար տալ չի կարելի, իբր թե այն հիման վրա, վոր «Ե» սերիայի շոգեկառքերի վրա տաքացման մակերեսի տարածության մեկ մետրից մի ժամում կարելի յե հանել 33 կիլոգրամից վոչ ավելի շոգի: Սակայն ընկեր Վյազմիտինովը սիստեմատիկաբար տալիս է կաթսայի բարձր արտադրանք — մոտավորապես քառակուսի մետրից մինչև 40 կիլոգրամ շոգի և հասնում է մի ժամում 50,7 կիլոմետր արագության:

Ինչո՞ւմն է ընկ. Վյազմիտինովի հաջողության գաղտնիքը:

Նա ահագին նշանակություն է տալիս շոգեկառքի սարքին լինելուն: Յերբ շոգեկառքը նորոգման մեջ է,

Վյազմիտինովն ինքն է վերահսկում նորոգման վորակին։ Յեթե շոգեկառքը վատ է նորոգվում, նա չի ընդունում այնքան ժամանակ, մինչև վոր նորոգողները չուղղեն թերությունները։ Նա գիտակցում է, վոր ճանապարհին ամենափոքրիկ անկանոնությունը շատ արագ կարող է դառնալ մեծ անկանոնություն։ Ընկ. Վյազմիտինովն առանձին նշանակություն է տալիս կաթսային։ Նա գիտե, վոր յեթե կաթսան և ծխահան խողովակները կեղտոտ են, ապա շատ շոգի վերցնել չես կարող։

Շոգեկառքը հնոցապանից ընդունելով՝ Վյազմիտինովն անպայման իմանում է շոգեկառքի «առողջության» մասին, տեղեկանում է՝ ճամփին կասկածելի չխկոցներ չե՞ն յեղել։

Ընկ. Վյազմիտինովը յերբեք չի մեկնում, մինչև վոր չի չխկացնում ամեն մի մասը, չի նայում ամեն մի պնդօղակի, չի ստուգում, թե ինչպես է կազմված գնացքը։ Այդ բոլորն անելով, նա վստահորեն վարում է գնացքը և այդ վստահությունը նրան թույլ է տալիս բարձրացնելու կաթսայի արագացումը։

Ընկ. Վյազմիտինովը համառորեն կռվում է գրաֆիկայի կատարման համար։ Յեթե նրան ուշացնում են կայարանում կամ սեմաֆորի մոտ, նա անհապաղ պարզում է պատճառը և հասնում է գնացքի արագ բաց թողման, իսկ հարկավոր դեպքերում սելեկտորով կապում է դիսպետչերի հետ։

Ընկ. Վյազմիտինովը մենակ չէ։ Ահա մի ուրիշ ստախանովական – կրիվոնոսական — Բալաջարի կայարանի գնացքներ կազմող ընկեր Պաշչաևը։ Նա սահմանել է վագոնների վերամշակման յերկաթուղային ռեկորդ։ Նա այդ ռեկորդը միանգամից չի ձեռք բերել։ Սկզբում նա վերամշակել է 700 վագոն, հետո 800–ից 900 և, վերջապես, մի հերթում 600 վագոնի նորմայի հանդեպ—1065 վագոն։



Բոլոր գնացքներն ընկ. Պաշչաևը կազմում է առանց խոտանքի։ Ինչո՞ւմն է ընկեր Պաշչաևի առանց ավարիայի, գերազանց աշխատանքի գաղտնիքը։

Ամենից առաջ նրանում, վոր նա համառորեն տիրապետել է իր գործի տեխնիկային։ Դեռ աշխատանքն սկսելուց առաջ, ընկեր Պաշչաևը ծանոթանում է առաջիկա աշխատանքի հետ, իմանում է վոչ միայն պարկի առկայությունը, այլև գնացքների մոտենալը, իմանում է աշխատանքի ընդհանուր պլանը, ինչպիսի վագոններից և վոր ժամանակին անհրաժեշտ է կազմել այս կամ այն գնացքը։

Աշխատանքն սկսելուց առաջ, ընկեր Պաշչաևը մանրամասն ծանոթացնում է իր բրիգադին (մանևրային մեքենավարին, միացնողին, սլաքավարին) առաջիկա աշխատանքի հետ և մեքենավարի հետ միասին մշակում է վագոնների վերամշակման պլանը։

Յերբ գնացքը ժամանում է, ընկ. Պաշչաևը միաժամանակ կատարում է ժամանած գնացքի քանդումը և նորի կազմումը, այն ժամանակ, յերբ առաջ գնացքը քանդում էյին, իսկ հետո նորից կազմում։

Վյազմիտինովի և Պաշչաևի մեթոդներով աշխատում են Բաքվի տասնյակ և հարյուրավոր յերկաթուղայիններ։

Ընկ. ընկ. Ստարկով Ֆիլիպի—Բաքվի վագոնային ուղեմասի յուղող, Մուխամեդ Խադիևի — ուղու 12–րդ դիստանցիայի բանվոր, և մյուսների ազգանունները հայտնի յեն Անդրկովկասի բոլոր յերկաթուղայիններին։

Ահագին հետաքրքրություն է ներկայացնում Բաքվի յերկաթուղայինների դեկտեմբերի 5–ին անցկացրած ստախանովյան որը։ Խնդիր դնելով տալ 1.500 ցիստերն լցնելու ռեկորդային հանրագումար, նրանք ստախանովյան աշխատանքի հետևանքով մի որում լցրին 1.645 ցիստերն, կամ պլանի 153 տոկոսը։ Այդ

պիսի լեցնում յերկաթուղին չի իմացել իր գոյության ամբողջ ընթացքում: 1645 ցիստերնի այդ լցումը խորտակիչ հարված հանդիսացավ «սահմանական» տրամադրությունների մնացորդներին՝ Բաքու 2-րդ կայարանի իբր թե թույլ անցունակության մասին, լցման ֆրոնտի նեղության մասին, լվացման կայարանի թուլության մասին և այլն և այլն:

Առանձնապես պետք է նշել, վոր յերկաթուղային տրանսպորտի հրամանատարական կազմը, վոչ մեր նավթագործների օրինակով, ակտիվ կերպով լծվել է ստախանովական օրերի անցկացմանը:

Ստախանովյան օրերի փորձի համար բնորոշ է «դերատեսչականության» բոլոր տեսակի հետքերի ան հայտացումը—և՛ կայարանը, և՛ վագոնային ուղեմասը, և՛ շոգեկառքային դեպոն, աշխատում եյին իսկական միասնական համերաշխ կոլեկտիվով:

Դեկտեմբերի 25-ի օրն անցավ ե՛լ ավելի կազմակերպված և հանգիստ, զգալիորեն ավելի պակաս լարվածությամբ: Այդ օրը լցման նոր ռեկորդ սահմանվեց—1945 ցիստերն, այսինքն՝ պլանի 128 տոկոսը:

Յերրորդ ստախանովյան օրը, վոր անցկացվեց նոր տարվա օրը—հունվարի 1-ին, նոր ռեկորդ տվեց —լցումը հասավ 2.171 ցիստերնի կամ պլանի 131 տոկոսի:

Նշանակո՞ւմ է, արդյոք այդ, վոր Բաքվի յերկաթուղայիններն արել են ամեն բան:

Իհարկե, վոչ: Յերկաթուղայինների առաջ կանգնած է ձեռք բերած հաջողությունների ամրացման առաջին խնդիրը, վորոնք ուժերի առաջին փորձն են հանդիսանում միայն: Բաքվի յերկաթուղայինները դեռ շատ ու շատ կարող են քամել իրենց շոգեկառքերից, վագոններից, արհեստանոցներից, դեպոներից և այլն:



Արդարացի պետք է գնահատել և՛ շրջանի պետ ընկ. Խրուստալյովին, և քաղբաժնի պետ ընկ. Բոբրիշևին, վոր նրանք ստախանովական — կրիվոնոսական շարժման ծագման առաջին իսկ օրերից իսկական ձևով, բոլշևիկորեն գլխավորեցին, կազմակերպեցին և ուղղություն տվին այդ գործին. և այդ յերաշխավորում է, վոր նրանք Անդրկովկասյան յերկաթուղում վոչ միայն չեն զիջի առաջին տեղը, այլև կգտնվեն մեր մեծ յերկաթուղային պետության առաջավոր շղթաների շարքում:

Միանգամայն հակառակ պատկեր է ներկայացնում մեր ջրային տրանսպորտը:

Ահա թե ինչ է գրում Կասպարի պետի տեղակալ ընկ. Սավինիխին իր զեկուցագրի մեջ՝ ստախանովյան շարժումը Կասպից նավագնացության մեջ ծավալելու հարցի առթիվ:

> «Համարյա մեխանիզացիայի լիակատար բացակայում, աշխատանքը կատարվում է մեծ մասամբ ձեռքով. այդ պատճառով ստախանովյան շարժման բուռն աճ, ինչպես այդ տեղի ունի տնտեսության մյուս ճյուղերում և տեխնիկապես սարքավորված նավահանգիստներում—մեր նավահանգիստներում դեռ չկա»:

Յեվ հետո.

«Տանկերների վրա կատարվող աշխատանքի հատուկ պայմանները և գոյություն ունեցող աշխատավարձի վճարման օրավարձային սիստեմը խանգարում են իրենց միջից շարքային ստախանովականներ առաջ քաշելուն: Տվյալ դեպքում կարող է առաջավոր դառնալ տանկերն ամբողջապես կամ նավապետն ու մեխանիկը»:

Հազիվ թե հատուկ վորոշում է հարկավոր, վորպեսզի ընկ. Մենյայլովը և ընկ. Հասան Ռահմանովը

բոլոր անհրաժեշտ յեզրակացությունները հանեն իրենց համար, որպեսզի ինքնիրեն անհապաղ իրենց ձեռքն առնեն ստախանովյան շարժման կազմակերպումն ու ղեկավարումը Կասպից նավագնացության մեջ, այնպես, որպեսզի ամենամոտ ժամանակներում Կասպից նավագնացությունը դուրս քաշվի այն դրությունից, որի մեջ նա գտնվում է, մանավանդ ավարիաների նկատմամբ:

Բաքվի յերկաթուղայինների աշխատանքի օրինակը պետք է ամբողջապես և լիովին դրվի մեր Բաքվի քաղաքային տրանսպորտի և առաջին հերթին Բաքվի ելեկտրական յերկաթուղու աշխատանքի հիմքում:

Ընկ. Պերիվերդիևն այստեղ նստած է: Ի մեծ ցավ սրտի՝ նրա մասին ևս չի լսվում ստախանովյան շարժման կազմակերպիչների շարքերում:

Ընկ. ՊԵՐԻՎԵՐԴԻՅԵՎ.— Մենք լավ ենք աշխատում:

Ընկ. ԲԱԳԻՐՈՎ.— Այդ քեզ է թվում, որ դու լավ ես աշխատում (ծիծաղ): Աշխատանքն լավ է համարվում այն ժամանակ, յերբ ամբողջ խորհրդային հասարակությունն է այդ ընդունում: Քեզ թվում է, թե դու լավ ես աշխատում, իսկ քո մասին չի լսվում, չես յերևում ստախանովյան շարժման կազմակերպիչների առաջին շարքերում. (դահլիճում աղմուկ):

Ընդհանրապես պետք է ասել, որ ձեռնարկություններում ու տնտեսական կազմակերպություններում, որոնք գտնվում են Բաքվի խորհրդի իրավասության տակ և որոնց սպասարկում են կուսակցության Վորոշիլովյան, Հոկտեմբերյան և Ջերժինսկու շրջկոմները, ստախանովյան շարժումը զարգացած չէ:

Բավական է միայն մի քանի խոսք ասել այն մասին, թե ինչպես է կազմակերպված ստախանովյան շարժումն այնպիսի կարևորագույն օբյեկտում, ինչպիսին է Բաքվի յերկրորդ ջրմուղը, որը յերկրորդ հըն



գամյակի խոշոր օբյեկտներից մեկն է Միության մեջ և ամենախոշոր շինարարությունն՝ Անդրկովկասում:

Հունվարի 9-ին մենք պետք է լսենք Բաքխորհրդի նախագահության զեկուցումը Բաքվի յերկրորդ ջրմուղի շինարարության ընթացքի մասին: Կուսակցության և Վորոշիլովի, և Ջերժինսկու շրջկոմները և Բաքխորհրդի կուսխմբակը պետք է բոլոր անհրաժեշտ յեզրակացությունները հանեն Բաքվի յերկրորդ ջրմուղի նկատմամբ:

Կարիք չկա ասելու, որ Բաքխորհուրդը և նրա բաժինները կատարելապես ոչինչ չեն անում շինանյութերի եժանացման հարցի նկատմամբ:

Վորքան ել այդ տարօրինակ է, Բաքվում—կառուցողական քարի հայրենիքում կառուցողական քարն ավելի թանգ արժե, քան թե Ադրբեջանի որևէ շրջանում:

Բաքխորհրդից հեռու չի գնացել նաև Ադրբեջանի տեղային արդյունաբերության ժողկոմատը և նրա ղեկավարներ՝ ընկ. ընկ. Աղավերդիևը, Խանֆերյանն ու Բոլախլինսկին: Բավական է մի փաստ բերել տեղային արդյունաբերության ժողկոմատի ամենաառաջավոր ձեռնարկության Կիրովաբադի տեքստիլ կոմբինատի աշխատանքի մասին:

Կիրովաբադի տեքստիլ կոմբինատի սարքավորման ոգտակար գործողության ցածր գործակցի հետևանքով տալիս է իր կարողության միայն 55 տոկոսը: Մանածագործական ավտոմատիկ ստանոկները միջին հաշվով աշխատում են ոգտակար գործողության գործակցի հնարավոր 95 տոկոսի փոխարեն 70 տոկոսով: Բանուժի ծախսում մանածարանում կազմում է 1000 իլիկին 7,7 հոգի, Միության նման ձևով վերասարքավորված ձեռնարկությունների 3,15-ի հանդեպ: Մանածագործության մեջ մի բանվորին ընկնում է 24 ավտո-

մաս՝ Միության ֆաբրիկների միջին 70–75 տոկոսա–մասերի հանդեպ:

Այդ փաստը ցույց է տալիս, որ ընկ. ընկ. Աղավերդիևը, Խանփերյանը, Բալախլինսկին, կուսակցության Կիրովաբադի քաղկոմը՝ հանձինս նրա քարտուղարներ ընկ. ընկ. Թաղիևի և Ռսխլովի ու Տեղարդժողկոմատի ձեռնարկությունը գլխավորող ընկերները շատ քիչ են աշխատել ստախանովյան շարժումը ծավալելու հանրապետական արդյունաբերության մեջ, որտեղ անսպառ, անսահման ռեզերվներ և հնարավորություններ կան:

Դրությունն ավելի վատթար է բամբակազտիչ գործարաններում աշխատանքի ստախանովյան մեթոդների զարգացման հարցում:

Ադրգոսխլոպկի ղեկավարությունը հանձինս ընկեր ընկ. Կարակոզովի, Աստամովի և Աբդուլ Ռեսուլովի, այլև կուսակցության Սալյանի, Սաբիր–Աբադի, Ալի Բայրամլուի, Կիրովաբադի, Ղազախի, Գյոքչայի, Նախիջևանի շրջանների շրջկոմները շատ քիչ բան են արել բամբակազտիչ գործարաններում ստախանովյան շարժման ղեկավարումը կազմակերպելու և նրան ուղղություն տալու համար: Բայց չէ՞ որ այդ ձեռնարկությունների մասին հատուկ ցուցմունք կա կուսակցության Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի որոշման մեջ, որտեղ ասված է.—

> «Թեթև արդյունաբերության մեջ ստախանովյան շարժումն առաջին հերթին զարգացնել հումույթի նախնական վերամշակման ճյուղերում — բամբակազործարաններում, փուշագործարաններում, կանեփագործարաններում, մետաքսակարժական գործարաններում»... և այլն:

Ժամանակ չլինելու պատճառով, յես կանգ չեմ առնի մյուս ձեռնարկությունների վրա, այդ թվում և ձկնարդյունաբերության վրա, որտեղ, պետք է ուղ–



ղակի ասել,– ստախանովյան շարժման դրությունն այնպես է, որ ընկ. Բոգանովը, յեթե ամենամոտ ժամանակներս սուր կերպով չուղղի այդ դրությունը, իրեն ոչ միայն ձեռնարկության ղեկավարությունից, այլ և կուսակցությունից հեռացնելու պատճառ կլինի:

Ավարտելով զեկուցմանս առաջին մասը, յես ուզում եմ ակտիվի, կուսակցական ու տնտեսական բոլոր ղեկավարների ուշադրությունը դարձնել իրենց նորմաները բոլոր կատարողներին կամ գերակատարողներին մեքենայորեն ստախանովականներ հաշվելու լուրջ վտանգի վրա:

Ընկերները պետք է հաստատապես ղեկավարվեն կուսակցության Կենտրոնական Կոմիտեի դեկտեմբերյան պլենումի որոշմամբ, որտեղ ասված է.—

> «Ստախանովյան շարժումը. նշանակում է աշխատանքի կազմակերպում նոր ձևով. տեխնոլոգիական պրոցեսների ռացիոնալացում, աշխատանքի ճիշտ բաժանում արտադրության մեջ, որակյալ բանվորների ազատում՝ յերկրորդական նախապատրաստական աշխատանքից, բանվորական տեղի լավագույն կազմակերպում, աշխատանքի արտադրողականության արագ աճման ապահովում, բանվորների ու ծառայողների աշխատավարձի զգալի աճման ապահովում»:

Կուսակցական փաստաթղթերի ստուգման արդյունքները, որ քննարկվել են կուսակցության Կենտրոնական Կոմիտեի դեկտեմբերյան պլենումում, լիովին հաստատեցին Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1935 թվի մայիսի 13-ի ցուցմունքներն այն մասին, որ շատ կուսկազմակերպություններում կուսակցական փաստաթղթեր տալու և պահելու գործում կամայականություն, կուսակցության անդամների ու թեկնածուների հաշվառման գործում խառնաշփոթություն և կուսակցության թեկնածուներ ընդունելիս ու անդամներ

փոխադրելիս կուսակցության կանոնադրության ամենակոպիտ խախտումներ են տիրել:

***

Կուսակցական փաստաթղթերի ստուգումը բացի այն բանից, վոր կուսակցությանը հնարավորություն տվեց յերևան հանել և շարքերը զտել խորթ, խցկված և հակախորհրդային տարրերից ու սրիկաներից հնարավորություն տվեց.

«յերևան հանել իր սեփական թերությունները ու սխալները կուսակցական-կազմակերպչական աշխատանքում և միջոցներ ձեռք առնել նրա արմատական բարելավման համար»,

հնարավորություն տվեց բարձրացնելու

«կուսակցական ամբողջ կյանքի մակարդակը, բարձրացնելով կուսակցական կազմակերպությունների բոլշևիկյան մարտունակությունը»:

Մեզ մոտ Ադրբեջանի կուսկազմակերպության մեջ վերջնական յեզրակացություններ մենք դեռ ևս չունենք:

Կուսակցության Կենտկոմի վորոշման համաձայն հունվարի առաջին կեսում մենք պետք է ավարտենք Ադրբեջանի կազմակերպության ամբողջ ստուգումը և ստուգման արդյունքները յենթարկենք Ադրբեջանի Կոմունիստական Կուսակցության (բոլշևիկների) Բագվի ու Կենտրոնական Կոմիտեների պլենումների քննարկմանը:

Վոչ մի կասկած չկա, վոր Ադրբեջանի կազմակերպությունը կուսակցական փաստաթղթերի ստուգման հետևանքով, ստուգումից դուրս յեկավ ամրապնդված ու համախմբված և այսոր ներկուսակցական կյանքի, ներկուսակցական աշխատանքի մակարդակը, բոլշևիկյան զգոնության, բոլշևիկյան կարգապահության, արտադրական ակտիվության մակարդակը շատ ու շատ բարձրացել է: (Ծափահարություններ):



Սակայն, ընկերներ, կուսակցական փաստաթղթերի ստուգումով մենք միայն սկսել ենք պատշաճավոր կարգի բերելու մեր կուսակցական տունը, մեր կուսակցական անտեսությունը:

Կատարված աշխատանքով սահմանափակվելը հանցանք կլիներ կուսակցության հանդեպ: Մենք չենք կարող յերթարկվել ինքնահանգստացման: Մենք պետք է շարունակենք հետագայում էլ մեր ամենօրյա պրակտիկ աշխատանքում ներկուսակցական կյանքի, քաղաքական – դաստիարակչական աշխատանքի խորացումը կուսակցության անդամների ու թեկնածուների հաշվառման դրվածքի, կուսակցական փաստաթղթեր տալու և պահպանելու, հաշվառման քարտերը կազմելու և պահելու, կուսակցության անդամների ուսումնասիրության ու բնութագրերի կազմելու բարելավումը, սիստեմատիկաբար աշխատելով կուսակցության ամեն մի անդամի նկատմամբ նրան աճեցնելու, նրան առաջ քաշելու իմաստով, մշտական կուսակցական ռեզերվ ստեղծելու իմաստով:

Մենք պետք է պատշաճ բարձրության հասցնենք պրոպագանդի ու ագիտացիայի գործը, կուսակցության անդամի գաղափարա – քաղաքական զինվածությունը, մենք պետք է սիստեմատիկաբար խորապես ուսումնասիրենք կուսակցության պատմությունը, և, ինչպես ասվում է կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի պլենումի վորոշման մեջ,

«... հասնել այն բանին, վոր կուսակցության կանոնադրությունը նրա ներքին կյանքի իրապես անխորտակելի հիմունքը դառնա»:

Նկատի ունենալով, վոր ամենամոտ ժամանակների քաղաքական ահագին կարևորության խնդիր է հանդիսանում կուսակցական տոմսերի, թեկնածուական քարտերի և հաշվառման քարտերի փոխանակումը, մենք պետք է խստորեն ղեկավարվենք կուսակցության Կենտ-

րոնական Կոմիտեյի պլենումի վորոշումներով, վորտեղ ասված է.—

«... Յեթե կուսակցական փաստաթղթերի ստուգման ժամանակ կուսակցական կազմակերպությունները հիմնական ուշադրությունը կենտրոնացրել եյին այն բանի վրա, վորպեսզի մերկացնեն խաբեբայության ճանապարհով Համկոմկուսի (բ) շարքերը խցկված՝ կուսակցության թշնամիներին, ամեն տեսակի պատահական մարդկանց ու ժուլիկներին, ապա փոխանակման ժամանակ հիմնական ուշադրությունն անհրաժեշտ է դարձնել այն բանի վրա, վորպեսզի ազատվել պասիվ, կուսակցության անդամի բարձր կոչումը չարդարացնող պատահականորեն Համկոմկուսի (բ) շարքերն ընկած մարդկանցից»:

Մենք պետք է աշխատենք, վոր կուսակցական տոմսերը փոխանակելիս Ադրբեջանի կազմակերպությունը վերջնականապես ազատենք կուսակցության անդամի կոչմանը բոլոր անարժաններից, մեր կազմակերպությունը դարձնենք Ադրբեջանի սոցիալիստական շինարարության զանազան ճյուղերում ստախանովյան շարժման ծավալման իսկական ավանգարդային ջոկատ:

Պետք է նկատի ունենալ, վոր կուսակցության անդամը — այդ ուղեցույց է, կուսակցության — այդ առաջավոր է, կուսակցության անդամը — այդ հարվածային է, ստախանովյան շարժման կազմակերպիչ, կուսակցության անդամը — այդ առաջին ստախանովականն է իր տեղամասում:

Պետք է բոլորը լավ հիշեն կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի վորոշումն այն մասին, վոր

«կուսակցական տոմսերը փոխանակելու ժամանակ կուսակցական կազմակերպությունները կուսակցական անդամներից վոմանց կարող են և չտալ կուսակցական տոմս, թեկուզ և անցած լինի



կուսակցական փաստաթղթերի ստուգումը, յեթե կուսակցության այդ անդամները չեն արդարացնում կուսակցության անդամի բարձր կոչումը»:

Նկատի ունենալով կուսակցական փաստաթղթերի փոխանակումից հետո թեկածուների առաջիկա ընդունելությունը և կուսակցության անդամ փոխադրելը, մեր կուսակցական կազմակերպությունները պետք է նախապատրաստական աշխատանք ծավալեն, առանձին ուշադրություն դարձնելով համակրողների մեջ տարվող աշխատանքին, անհատապես ուսումնասիրելով նրանցից ամեն մեկին, հիշելով Կենտկոմի պլենումի վորոշումն այն մասին, վոր կուսակցության մեջ ընդունումն առաջին հերթին պետք է կատարվի ստախանովականների, կուսակցության գործին նվիրված վոչ կուսակցական բոլշևիկների հաշվին:

Պետք է վերջ դրվի կուսակցական կազմակերպությունների կողմից ցույց տրված այն անհանդուրժելի վերաբերմունքին, վոր մինչև այժմ նկատվում եր կոմյերիտական կազմակերպություններին ղեկավարելու մեջ, կոմյերիտականների դաստիարակման և նրանց կուսակցության անդամի բարձր կոչման համար նախապատրաստելու գործում:

Ընդունելով այն բոլոր առավելությունները, վոր կուսակցության մեջ ընդունվելիս պետք է ունենան կոմյերիտականները, անհրաժեշտ է խստությամբ անցկացնել անհատական ընտրության սկզբունքը, հիշելով, վոր

«Կուսակցության համար ընտրվում են միմիայն ամենաարժանավոր, ստուգված մարդիկ, յեվ ամեն մի կոմյերիտական հնարավորություն ունի Համկոմկուսի (բ) շարքերը մտնելու՝ սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակցելու, իր գաղափարական մակարդակը և բոլշևիկյան կոփվածությունը բարձրացնելու միջոցով, սերտորեն կա

պելով իր աշխատանքը կուսակցական կազմակերպության հետ»: (Համկոմկուսի (բ) Կենտկոմի պլենումի բանաձևից):

Ընկերներ, կուսակցության Կենտրոնական Կոմիտեի դեկտեմբերյան պլենումի վորոշման լույսի տակ Ադրբեջանի բոլշևիկների առջև կանգնած են այդ վորոշումները բոլշևիկորեն կիրառելու վիթխարի կարևորություն ունեցող խնդիրներ:

Միմիայն ժրաջան, ամենորյա համառ, սևագործ աշխատանքով մենք կարող ենք կատարել այդ խնդիրները:

Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատելու 15-ամյակի տոնակատարման օրը՝ ընկերներ Ստալինի ու Մոլոտովի վողջույնի հեռագրում գծագրված է այն ահագին պատասխանատվությունը, վոր դրված է Բագվի ու Ադրբեջանի բոլշևիկների վրա, Բագվի պանծալի նավթագործների վրա.—

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների ամբողջ Միությունն ապրում է Ադրբեջանի սև վոսկով — նավթով».

կարդում ենք մենք ընկերներ Ստալինի և Մոլոտովի հեռագրում:

Յեվ յեթե Խորհրդային Միությունն ապրում է Ադրբեջանի սև վոսկով — նավթով, ապա Ադրբեջանում չի կարող լինել վոչ մի բոլշևիկ, Բագվում վոչ մի պրոլետար, Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության վոչ մի քաղաքացի, վոր նավթով չապրի:

Այսօր Բագվի ակտիվը — Ադրբեջանի ու Բագվի բոլշևիկների առաջավոր մասը — պետք է ի լուր ամենքի ասի.— նավթային ֆրոնտում կուսակցության վոչ մի վոչ ստախանովական անդամ, վոչ մի վոչ ստախանովական նավթագործ:



Չպետք է լինի վոչ մի ինժեներ, վոչ մի տեխնիկ, վոչ մի նավթագործ-տնտեսավար, վոր դուրս լինի նավթային արդյունաբերության մեջ ստախանովյան շարժման լայն ծավալման ղեկավարումից, կազմակերպումից, ոգնությունից, աջակցությունից:

Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի բոլշևիկյան ղեկավարությամբ, մարտական ստալինյան ընկեր Լավրենտի Բերիայի ղեկավարությամբ նավթային արդյունաբերությունը բարձրացնենք մեր սոցիալիստական տնտեսության առաջավոր ճյուղերի մակարդակին:

Լենինի — Ստալինի մեծ, անպարտելի դրոշի տակ — ամենքը հանուն համերաշխ, բոլշևիկյան, անողոք, անձնվեր պայքարի նավթի համար:

Կեցցե մեր հզոր Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցությունը:

Կեցցե առաջնորդ և ուսուցիչ, մեր ընկեր ՍՏԱԼԻՆԸ:

Հայերենը խմբագրեց՝ Ն. ՇԱԽՈՒՆԻ
Տեխ. խմբագիր՝ Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

Главлит № 1865. Азпартиздат № 37 Заказ № 849. Тираж 5000
Сдано в набор 10-III. Подписано к печати 27-III. Печ. листов 9. Печ. знаков 98,000 фор. бумаги 72X105—32.
Тип. „III Интернационал“ ул. Баку.,Ефимова—Саратовва 29

ՀՀ Ազգային գրադարան
NL0184548

13/1936

295

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

М. Д. БАГИРОВ

ОБ ИТОГАХ ДЕКАБРЬСКОГО ПЛЕНУМА ЦК ВКП (б)

*Доклад на собрании актива бакинской партийной организации 7 января, 1936 года*

АЗПАРТИЗДАТ БАКУ—1936